Հաստատում եմ՝
Տնօրեն _____ Հ. Կոստանյան/
_____ 2023թ.

Ստուգված է
Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով՝
/Ն. Պողոսյան/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզ քաղաք Վանաձոր

Հ.Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

6-րդ բ դասարան

Դասղեկ՝ Լուսինե Աշոտի Անտոնյան

2023-2024 ուսումնական տարի

<u>Քաղվածք</u>

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>, պետական ոչ առևտրային կազմակերպության

(կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,

բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.

գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,

դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին

ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,

զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.

է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,

բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման

գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.

դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.

ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները

զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:

74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:

75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:

78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) -Դասարանը բաղկացած է 31 աշակերտից՝ 11 տղա,20 աղջիկ:Աշխույժ,ակտիվ,կազմակերպված և բանիմաց աշակերտներ են:Դասարանում տիրում է ջերմ և ընկերական մթնոլորտ,խմբավորումներ չկան:Բոլոր աշակերտները պարտաճանաչ հաճախում են դպրոց՝դասերին պատրաստ:Դասարանում ունենք տեսողական խնդիրներ ունեցող աշակերտներ,ԿԱՊԿՈՒ երկու աշակերտ,որոնք սակայն հետ չեն մնում դասերից և աշխատում են իրենց կարողությունների չափով:Սերտորեն գործում է աշակերտ –դպրոց-ծնող օղակը:Տարրական դպրոցից անցումը միջին դպրոց անցել է անցնցում:

2.ՈՒսումնադաստիարակչական - նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում
1. Աշխատանքային պլանի կազմում:
2.Դասագրքերի բաշխում :
3.Կազմակերպչական աշխատանքներ՝կահավորել դասասենյակը ,դասարանի ավագի և ակտիվի ընտրություն:
4. Սերտորեն համագործակցել դասարանում պարապող ուսուցիչների հետ,կատարել դասալսումներ.
5.Թերացող աշակերտների համար կազմակերպել ուսումնական օգնություն.
6.Ծնողական ժողովների անցկացում,ծնողական խորհրդի կազմի ընտրություն.
7.Հետևել կարգապահությանը,հանձնարարությունների կատարմանը.
8. Հաճախման ամենօրյա հաշվառում
8.Կազմակերպել միջոցառումներ,այցելություններ թանգարաններ,նպատակային և ուսուցանող էքսկուրսիաներ,արշավներ.
9.Մեր արթնացնել ընթերցանության նկատմամբ,կազմակերպել ասմունքի մրցույթներ

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1.Հոգևոր դաստիարակություն- Աշակերտների մեջ սերմանել սեր,հավատ և հարգանք քրիստոնեության և Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ:Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ ,որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:Անդրադառնալ եկեղեցական տոներին,ազգային ավանդույթներին և արժեքներին:Խթանել մարդկային բարձր արժեքների ձևավորմանը:

3.2. Գեղագիտական դաստիարակություն –Մշակույթը կրող,ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում :Աշակերտների մեջ գեղագիտական ճաշակի բարձրացում,գեղեցիկի գնահատում:Բազմակողմանի դաստիարակության կարևորության և առանձնահատկության մասին զրույցների,բանավեճերի անցկացում:

3.3.Ռազմահայրենասիրական դաստիարակություն –Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք հայրենիքի,ակնածանք՝զինվորի և հայ ժողովրդի նկատմամբ:Մեր պատմության վառ և հերոսական էջերով ,հայ ժողովրդի հերոս զավակների գործունեությամբ ,նրանց թևավոր խոսքերով և օրինակով ոգևորել ու բարձրացնել աշակերտների հայրենասիրությունը,մարտական ոգին:Ձևավորել առանձնահատուկ հարգանք և պատասխանատվություն պետության,պետական խորհրդանիշների նկատմամբ:

3.4.ֆիզիկական դաստիարակություն –ֆիզիկական զարգացմանը ուղղված պայմանների ստեղծում,վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:Սովորեցնել ինչ է առողջ ապրելակերպը,ճիշտ սնունդը,հիգենայի կանոները:Անդրադառնալ հակահամաճարակային կանոների պահպանմանը:Աշակերտների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել սպորտի և ֆիզկուլտուրայի դասերի նկատմամբ:

3. 5.Աշխատանքային դաստիարակություն-Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:Ամենօրյա հերթապահությունների և շաբաթօրյակների միջոցով զարգացնել աշխատասիրությունը,մաքրասիրություն,ընկերասիրություն:Ձևավորել հոգատար վերաբերմունք դպրոցի և հասարակական գույքի նկատմամբ:

3.6.Բնապահպանական դաստիարակություն –Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում:Ծանոթացնել համամոլորակային խնդիրներին,կազմակերպել այդ խնդիրների լուծմանը նվիրված քննարկումներ,բանավեճեր,դիտել թեմային համապատասխան ֆիլմեր:Կազմակերպել արշավներ,էքսկուրսիաներ,մշակել բնության գրկում իրենց շուրջը մաքուր պահելու կուլտուրա,բնության հանդեպ խնամքի ցուցաբերում:

3.7.Դպրոց ընտանիք կապը –Սերտորեն պահել աշակերտ-դպրոց-ծնող կապը,համագործակցել ծնողների հետ:Աշակերտների կենսակերպի,առողջական վիճակի,ընտանիքի սոցիալական պայմանների ուսումնասիրում,անապահով ընտանիքների հաշվառում:Դասարանական աշխատանքներին ծնողների ներգրավում:Ծնողական կոմիտեի ստեղծում,ծնողական ժողովների միջոցով տեղեկացնել ուսումնական գործընթացում տեղի ունեցող փոփոխությունների մասին:

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
I	Դասագրքերի բաշխում,ծնողական ժողովի անցկացում,կազմակերպչական հարցեր,դասարանի կահավորում:	սեպտեմբեր	Դաղեկ, դասարան, գրադարանավար ծնողներ
II	Դասարանի նախորդ տարվա կատարած աշխատանքների վերլուծություն: Ավագի և դասարանի ակտիվի ընտրություն: Ստեղծված առաջարկությունների արկղի պահպանում,առաջարկությունների քննարկում:	սեպտեմբեր	Դաղեկ, դասարան
III	Անդրադառնալ աշակերտների իրավունքներին և պարտականություններին,ինչպես նաև << քաղաքացիական ինքնություն>> հասկացությանը:Ձևավորել օրինապահ քաղաքացիներ:	սեպտեմբեր	Դաղեկ, դասարան
IV	<<Ազգ և պետություն>>թեմաներով զրույց-քննարկումներ:Արժևորել հայրենիքի դերն ու նշանակություն:Անդրադառնալ 44-օրյա պատերազմին:Այցելել հուշահամալիր՝ խոնարհումի և հարգանքի տուրք մատուցելու :	սեպտեմբեր	Դաղեկ, դասարան
V	ՈՒսուցչի տոնին ընդառաջ փոքրիկ միջոցառման կազմակերպում: Կարևորել կրթության դերը,ուսուցչի աշխատանքը, արժևորել ուսուցչի դերը աշակերտի կայացման ու կերտման գործում:	հոկտեմբեր	Դաղեկ, դասարան
VI	Անցկացնել բանավեճ աշակերտների կողմից ընտրված թեմայով:Զարգացնել միմյանց հետ հաղորդակցվելու և բանավիճելու հմտություններ:	հոկտեմբեր	Դաղեկ, դասարան
VII	<<Եկեղեցի և ազգ>>քննարկման միջոցով հիմնավորել Հայ Առաքելական եկեղեցու դերն ու նշանակությունը հայապահմանման ,ազգային արժեքների և ավանդույթների փոխանցման գործում:Այցելություն եկեղեցի:	հոկտեմբեր	Դաղեկ, դասարան
	Այցելել Ստեփան Զորյանի տուն-թանգարան:	նոյեմբեր	Դաղեկ, ԴԱԿ

VIII	Խթանել և սեր արթնացնել դեպի գիրքը,հայ գրականության գործիչների և մշակույթի նկատմամբ:Զարգացնել թանգարանային մշակույթ:		Դասարան,
IX	Անդրադառնալ մեդիա դաշտին,սովորեցնել,թե ինչպես օգտվել հավաստի աղբյուրներից,չլսել և չտարածել ապատեղեկատվություն: Մեդիագրագիտության շաբաթ	նոյեմբեր	Դասղեկ,օպերատոր դասարան
X	Ընթերցանության մրցույթի կազմակերպում: Խթանել վարժ և գրագետ խոսքի ձևավորմանը,հարստացնել բառապաշարը,նպաստել արտահայտիչ խոսքի զարգացմանը:	նոյեմբեր	Դասղեկ,մայրենիի ուսուցիչ, դասարան
XI	<<Ես օրինապահ եմ>> թեմայով զրույց,փոքրիկ անկյունի պատրաստում:	նոյեմբեր	Դասղեկ, դասարան
XII	Ներողամտության,հանդուրժողականության և սիրո մթնոլորտի ապահովում դասարանում, Կարգապահական հարցերի քննարկում: Կարևորել ընկերասիրությունը, հոգատարությունը և հարգանքը մարդու անձի նկատմամբ:	նոյեմբեր	Դասղեկ,հոգեբան, դասարան
XIII	<< Հեռախոս, թե ակտիվ խաղեր >> թեմայով զրույց-քննարկում : Կարևորել ակտիվ խաղերի դերը մեր առօրյայում:	դեկտեմբեր	Դասղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասարան
XIV	Բնական աղետներ և նրանց հետևանքները: Ինչպես պաշտպանվել և առաջին օգնություն:	դեկտեմբեր	Դասղեկ,բուժքույր,դասարան
XV	Ամանորի պատրաստություններ, <<Մենք հավատում ենք ամանորյա հրաշքների>> ,փոքրիկ միջոցառում:	դեկտեմբեր	Դասղեկ, դասարան
XVI	Առաջին կիսամյակի ամփոփում, բացթողումների վերհանում ,վերլուծել պատճառները,մշակել վերացման քայլեր:	հունվար	Դասղեկ, դասարան
XVII	Վահանակի պատրաստում. Վարքագծի կանոններ՝ տանը,դպրոցում,հասարակական	հունվար	Դասղեկ, դասարան

	վայրերում:		
X VIII	<<Օրը Տերյանական է …>> ցերեկույթ նվիրված Վահան Տերյանի 139-ամյակին:	հունվար	Դասղեկ,հյուրեր դասարան
XIX	Կազմակերպել դաս- միջոցառում նվիրված հայ զինվորին,Հայոց բանակին:Արժևորել և կարևորել բանակի դերը ՀՀ կայացման և պահպանման գործում:	հունվար	Դասղեկ, դասարան,զինղեկ
XX	Թատերական ներկայացման կամ ֆիլմի դիտում:	փետրվար	Դասղեկ, դասարան
XXI	Անդրադառնալ ազգային ավանդույթներին, տոներին,խոսել հայապահպանության մասին,նշել այն բոլոր գործոնները ,որոնք հային միշտ կպահեն հայ:	փետրվար	Դասղեկ, դասարան
XXII	Գրքի տոնին նվիրված կազմակերպել ընտրված գրքերի քննարկում,արժևորել գրքերի դերը մարդու զարգացման ,մտահորիզոնի և ներաշխարհի ձևավորման գործում:Նվիրել գրքեր:	փետրվար	Դասղեկ,դասարան գրադարանավար
XXIII	Քննարկել մայրենի լեզվի կարևորությունը, հայեցի խոսքի անհրաժեշտությունը, անդրադառնալ Մայրենի լեզվի տոնին:	փետրվար	Դասղեկ,դասարան
XXIV	Զրույց- քննարկում՝ <<Գարունը նոր կյանքի զարթոնք>> թեմայով :Կազմակերպել գարուն թեմայով ասմունքի մրցույթ:	մարտ	Դասղեկ,դասարան
XXV	Անդրադառնալ Կանանց տոնին ,կարևորել և գնահատել կանանց ներդրումը կյանքի բոլոր բնագավառներում:Կազմակերպել փոքրիկ միջոցառում:	մարտ	Դասղեկ,դասարան
XXVI	<<Էկոլոգիական հիմնախնդիրներ >> թեմայի քննարկում:Պաստառի պատրաստում	մարտ	Դասղեկ,դասարան
XXVII	Անցկացնել զրույց-քննարկում՝Ազգային	ապրիլ	Դասղեկ,դասարան

	արժեքներն ու ավանդույթները ազգապահպանության գործում ,կարևորել այդ արժեքների դերը մեր կյաքում:		Քահանա Տեր Վահան Ազարյան
XXVIII	<<Մաքուր պահենք բնությունը>> թեմայով զրույց:Մասնակցել դպրոցի բակի կանաչապատման աշխատանքներին:	ապրիլ	Դասղեկ,դասարան
XXIX	Այցելություն Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան	ապրիլ	Դասղեկ,դասարան
XXX	Պատմամշակութային հուշարձանների պահպանության միջազգային օրվան նվիրված կատարել այց Լոռու մարզի որևէ հուշարձան:	ապրիլ	Դասղեկ,դասարան
XXXI	Հայոց մեծ եղեռնը և հայ ժողովրդի արդարացի պահանջը,Ցեղասպանության միջազգային ճանաչում:Այցելություն Ցեղասպանության անմեղ զոհորի հուշակոթող:	ապրիլ	Դասղեկ,դասարան
XXXII	Մեր հերոսների օրինակով, նրանց հերոսական անցյալով ոգեշնչել և բարձրացնել ռազմահայրենասիրական ոգին:	մայիս	Դասղեկ,դասարան
XXXIII	Ինչ տվեց մեզ այս ուսումնական տարին,կատարել անդրադարձ,վեր հանել ձեռքբերումներն ու բացթողումները:	մայիս	Դասղեկ,դասարան
XXXIV	Կազմակերպել ճանաչողական – ուսուցողական էքսկուրսիա ,զարգացնել գեղագիտական ճաշակ,ձևավորել մշակույթ:	մայիս	Դասղեկ,դասարան ծնողներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	ծանոթություն
04.09	Աշակերտական ակտիվ	

11.09	Գիտելիքը զենք է	
18.09	Օրվա ռեժիմ,քունը և դրա կարևորությունը	
25.09	Խաղաղություն եմ ուզում	
02.10	Եթե ես լինեի ուսուցիչ	
09.10	Ես սիրում եմ իմ քաղաքը	
16.10	Համերաշխությունը հզոր զենք	
30.10	Հեռախոսն իմ կյանքում	
06.11	Իմ ընտանիքը	
13.11	Ես մարդ եմ	
20.11	Մեդիագրագիտություն	
27.11	Բուլինգ	
04.12	Կոնֆլիկտ և նրա լուծման հնարավոր ելքերը	
11.12	Բնական աղետներ	
18.12	Ես հավատում եմ հրաշքի	
08.01	Առաջին կիսամյակի ամփոփում	
15.01	Վարվեցողության կանոններ	
22.01	Հայ գրականության մեծեր	
29.01	Հայոց անպարտելի բանակ	
05.02	Ընկերասիրություն	
12.02	Հետաքրքրությունների իմ շրջանակը	
19.02	Կարևոր գրքեր	
26.02	Էկոլոգիական հիմնախնդիրներ	
04.03	Նոր կյանքի սկիզբ	
11.03	Կանանց միջազգային տոն	
18.03	Հոգատարություն,կամեցողություն	
01.04	Իմ հերոսը	
8.04	Ավետման տոն	
15.04	Ազգային-եկեղեցական տոներ	
22.04	Հիշում եմ և պահանջում	
29.04	Բարոյական արժեքներ	
06.05	Հայրենասիրություն,սեփական պատմության ճանաչում	
13.05	Աշխարհն ու նոր մարտահրավերները	
20.05	ՈՒսումնական տարվա ամփոփում	